

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ



## Տ Ա Ր Ա Ծ Ք Ը

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Ասիայի հարավ-արևմուտքում: Գրավում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան հատվածը՝ Կովկասի և Առաջավոր Ասիայի միջև (Կուր և Արաքս գետի գետերի միջին հոսանքների միջգետային տարածքը): Ընդհանուր տարածքն ընկած է հս.լ  $38^{\circ} 50'$  -  $41^{\circ} 18'$  -ը և ալ.ե.  $43^{\circ} 27'$  -  $46^{\circ} 37'$  -ի միջև:

Հյուսիսից և արևելքից սահմանակից է Վրաստանին և Ադրբեջանին, իսկ արևմուտքից և հարավից՝ Թուրքիային և Իրանին:

Երկրի տարածքը կազմում է  $29743 \text{ կմ}^2$ , որի 46.8%-ը կազմում են գյուղատնտեսական հողատեսքերը, 34.9%-ը՝ լեռները, բարձրավանդակներն ու այլ հողատեսքերը, 12.7%-ը՝ անտառները և 5.6%-ը՝ ջրային տարածքը:

Երկրի ամենաբարձր կետը Արագած լեռան գագաթն է ( $4090 \text{ մ}$ ), ամենախոր իջվածքը՝ Դեբեդ գետի կիրճը ( $390 \text{ մ}$ ): Ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք  $360 \text{ կմ}$  է, իսկ արևմուտքից արևելք՝  $200 \text{ կմ}$ :

Հայաստանի տարածքում ամենամեծ լիճը Սևանա լիճն է (մակերեսը  $1239 \text{ կմ}^2$ ), ամենաերկար գետն Արաքսն է՝  $158 \text{ կմ}$  (ընդհանուր երկարությունը՝  $1072 \text{ կմ}$ ):




Արագած լեռան գագաթը  
**ԼԵՌՆԱԳԱԳԱԹՆԵՐԸ**

Անվանումը	Տեղանքը	Բարձրությունը ծովի մակերևույթից, մետր
Արագած	Արագածի լեռնազանգված	4090
Կապուտջուղ	Ջանգեզուրի լեռնաշղթա	3906
Աժդահակ	Գեղամա լեռնաշղթա	3598
Սպիտակասար	Գեղամա լեռնաշղթա	3555
Վարդենիս	Վարդենիսի լեռնաշղթա	3522
Արամասար	Բարգուշատի լեռնաշղթա	3392
Իշխանասար	Ղարաբաղի բարձրավանդակ	3549
Բաղացար	Մեղրու լեռնաշղթա	3250
Խուստուփ	Խուստուփ-Կատարի լեռնաշղթա	3214
Լեզի	Ջավախքի լեռնաշղթա	3157
Գոզի	Վայքի լեռնաշղթա	3113
Թեժ լեռ	Փամբակի լեռնաշղթա	3101
Մեծ Եղնախաղ	Եղնախաղի լեռնաշղթա	3042
Բովաքար	Հալաբի լեռնաշղթա	3016
Ուրասար	Բազումի լեռնաշղթա	2993
Միափոր	Միափորի լեռնաշղթա	2993
Քաշաթաղ	Սևանի լեռնաշղթա	2901
Արայի լեռ	Արայի լեռնազանգված	2577

Հայաստանը լեռնային երկիր է: Հանրապետության տարածքի 76.5%-ը գտնվում է ծովի մակերևույթից 1000-2.500 մետր բարձրության վրա: Լեռնաշղթաները գրավում են մոտ 14 հազ.կմ<sup>2</sup> տարածք կամ երկրի ընդհանուր մակերեսի 47%-ը: Բարձրավանդակները կազմում են երկրի մակերեսի ավելի քան 1/3-ը (11 հազ.կմ<sup>2</sup>): Հայաստանի տարածքը յուրահատուկ երկրաբանական թանգարան է: Այստեղ կարելի է գտնել բոլոր այն ապարները, որ կազմում են մեր մոլորակի կեղևը: Տարածքի 60%-ից ավելին ծածկված է տարբեր տեսակի հրաբխային ապարի և տուֆի շերտով: Հայաստանի ընդերքը հարուստ է բազմազան օգտակար հանածոներով: Հրաբխային ժայթքումների հետևանքով գոյացել է բնական շինանյութերի՝ տուֆի, բազալտի, անդեզիտի, պեռլիտի և այլ նյութերի մեծ պաշար, որն օգտագործվում է շինարարությունում:

## Գ Ե Տ Ե Ր Ը

Գետերի անվանումը	Որտեղ է բափվում	Երկարությունը, կմ	Ջրհավաք մակերեսը, կմ <sup>2</sup>	Ընդհանուր անկումը, մ	Միջին տարեկան հոսքը, մ <sup>3</sup> /վրկ	Հոսքի մոդուլը, վրկ/կմ <sup>2</sup> -ից	Միջին բազմատարյան տարեկան հոսքը, մլն.մ <sup>3</sup>
Փամբակ	Դեբետ	86	1380	940	7.97	7.97	368.6
Չորագետ	Դեբետ	67	1460	1390	11.5	11.5	529.2
Դեբեդ	Խոան	176	4050 <sup>1</sup>	565	8.84	8.84	1128
Աղստև	Քուր	133	1610 <sup>1</sup>	2770	6.83	6.83	346.5
Ախուրյան	Արաքս	186	3602 <sup>1</sup>	1070	9.08	9.08	1030
Սևջուր	Արաքս	38	3540	27	9.38	9.38	1046
Քասաղ	Սևջուր	89	1020	1370	9.03	9.03	290.1
Հրազդան	Արաքս	141	2310	1090	9.70	9.70	705.6
Չկնագետ	Սևանա լիճ	22	90	400	8.08	8.08	34.6
Մասրիկ	Սևանա լիճ	43	753	970	5.38	5.38	127.6
Վարդենիս	Սևանա լիճ	28	116	1240	15.3	15.3	56.1
Արգիճի	Սևանա լիճ	51	384	620	14.3	14.3	172.9
Գավառագետ	Սևանա լիճ	40	467	1370	7.94	7.94	116.8
Ազատ	Արաքս	56	547	2285	11.1	11.1	192.5
Վեդի	Արաքս	58	701	1910	2.64	2.64	58.3
Արփա	Արաքս	128	2175 <sup>1</sup>	2670	10.1	10.1	689.8
Մեղրիգետ	Արաքս	35	336	1800	8.33	8.33	88.2
Ողջի	Արաքս	86	933	3610	11.1	11.1	327.6
Որոտան	Արաքս	178	2180 <sup>1</sup>	2775	10.0	10.0	689.8
Արաքս	Քուր	1050	101900	3295	-	-	-



Դեբեդ գետը և Սանահին կամուրջը

Հանրապետության ջրի պաշարները սահմանափակ են և տարեկան կազմում են ընդամենը 8.5 մլրդ.մ<sup>3</sup>, որից 6.54-ը՝ մակերեսային ջրի հոսք է: Հայաստանի գետերը հիմնականում լեռնային են, խիստ արտահայտված մեծենային (սակավաջուր) հոսքերով:

<sup>1</sup> Տվյալները սահմանափակվում են Հայաստանի սահմաններում ընդգրկվածության մասով:  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԸ ԹՎԵՐՈՎ, 1998-2002

## Լ Ճ Ե Ր Ը

	Մակարդակի միջ, մ	Ծավալը	Հայելու մակերեսը, կմ <sup>2</sup>
Սևանա	1896	33.2 կմ <sup>3</sup>	1239.0
Արփի	1480	50.0 մլն. մ <sup>3</sup>	4.5
Սև	2708	9.0 մլն. մ <sup>3</sup>	2.0
Այրր	853	310 հազ. մ <sup>3</sup>	0.07
Քարի	3190	357 հազ. մ <sup>3</sup>	0.12
Կապուտան	3299	1.5 մլն. մ <sup>3</sup>	0.1
Ակնա	3038	2.5 մլն. մ <sup>3</sup>	0.8

ՀՀ տարածքում գտնվում են քաղցրահամ լճեր և ջրամբարներ՝ մոտ 35.8 մլրդ. կմ<sup>3</sup> ընդհանուր ծավալով: Այդ ծավալի 95.5%-ը կազմում է աշխարհի ամենաբարձրադիր լեռնային լճերից մեկը՝ Սևանը, որը գտնվում է ծովի մակերևույթից 1916 մ (մինչև իջեցումը) բարձրության վրա: Դրա ջրային պաշարներն այժմ կազմում են մոտ 34,2 մլրդ. մ<sup>3</sup>:

Սևանը Հայաստանի Հանրապետության բնության զարդն է (հնագույն անվանումը՝ Գեղամա ծով): Լեգենդն այն կապում է Ամասիա թագավորի որդու՝ զորավար Գեղամի անվան հետ: Մեծ Սևանի ջրային հայելու մակերեսը 972 կմ<sup>2</sup> է, առավելագույն խորությունը՝ 46 մ, Փոքր Սևանինը, համապատասխանաբար՝ 284 կմ<sup>2</sup> և 80 մ: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը:

Անտնտեսվար և անխնա օգտագործումից Սևանը խիստ տուժել է և դրա ջրային պաշարները զգալիորեն նվազել են: Լիճ թափվող ոչ բավարար մաքրված հոսքաջրերի, ինչպես նաև լճի մակարդակի իջեցման հետևանքով կտրուկ վատացել է նաև ջրի որակը: Բացասական հետևանքները մասնակիորեն մեղմացնելու նպատակով 1981թ. շահագործման հանձնվեց 48 կմ 420 մ երկարությամբ Արփա-Սևան թունելը (առավելագույն խորությունը գետնի մակերեսից 1230 մ է) և փորձ արվեց Սևանի ջրային պաշարներն ավելացնել Արփա գետի ջրերով: Թունելը լճի հետ միանում է 850 մ երկարությամբ բաց ջրանցքով:



Սևանա լիճը

**ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ  
ԵՎ ՋՐԻ ՀԱՅԵԼՈՒ ՄԱԿԵՐԵՍԸ**

	<b>Ծավալը, մլն. մ<sup>3</sup></b>	<b>Հայելու մակերեսը, հա</b>
Ախուրյան	525	4180
Ազատ	70	285
Ապարան	91	735
Սպանդարյան	257	1025
Թոլորս	96.8	480
Կեչուտ	25	135
Հախում	12	83
Քարահունջ	1.27	18.3
Շամբ	13.6	112
Մանթաշ	8.2	76.4
Կառնուտ	24.7	234
Սառնաղբյուր	4.85	56
Ջողազ	45	230
Հեր-Հեր	26	115
Թավշուտ	6	60
Սևաբերդ	6	45
Հալավար	5.5	38
Դավիթ Բեկ	2.5	14
Տավուշ	5.28	40
Վարդաքար	5	86
Մեծավարն	5.4	330
Արծվաշեն	2.03	26
Գեղարդալիճ	1.52	25
Ծիլքար	1.2	26
Հացաշեն	1.11	37
Ախպարա	5.6	170
Երևանյան	4.8	95
Գեղի	15	35
Ակնալիճ	3.91	53